ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/4Շ

ք. Երևան **« 03 » սեպտեմբերի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ.Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու),մի կողմից, և <<Բերմա>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մանուկյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 70 օր, բայց ոչ ուշ, քան 2019թ. դեկտեմբերի 10-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 65 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[26]

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[27]

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

---

[26] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 440,461,512 (չորս հարյուր քառասուն միլիոն չորս հարյուր վաթսունմեկ հազար հինգ հարյուր տասներկու) ՀՀ դրամ, որից 73,410,252 (յոթանասուներեք միլիոն չորս հարյուր տաս հազար երկու հարյուր հիսուներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև համաձայնագիր կնքելու միջոցով:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[30] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ-ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողների ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը.[325]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[33]

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Բերմա» ՓԲԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, Արդյունաբերական հանգույց, Արտադրական թիվ 9
ՀՎՀՀ 02578338	«Ամերիդրանկ» ՓԲԸ , Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 900011025823	Հ/Հ 1570015674010100
	ՀՎՀՀ 03800108
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

[33] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

Հավելված թիվ 1
«03» սեպտեմբերի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/4Շ ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մոտեցում Մեծամորի թանգարան 4.1կմ (3.6+0.5) ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների

/ՀՀ հազ. դրամ/

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի գինը *	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	Ա/ճ Մոտեցում Մեծամորի Թանգարան Հատված Կմ 0+000 - Կմ2+702				
	I, Նախապատրաստական աշխատանքներ				
1	10կվ Էլեկտրահաղորդման գծի տեղափոխում նոր հաղորդալարի մոնտաժում (3 x 1450 մ)	գծմ	1450	4.985	7 228.250
	Գազատարի վերատեղադրում				
1	Գոյություն ունեցող գազատարի ապամոնտաժում և վերատեղադրում	գծմ	220	11.740	2 348.430
	Դիտահորերի բարձրացում				
1	Գոյ, ունեցող դիտահորերի բարձրացում միաձույլ բետոնով B 20	հատ	4	12.036	48.144
	Ցանկապատեր				
1	Գոյ, ունեցող ցանցե ցանկապատի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	30	4.453	133.590
2	Գոյություն ունեցող ցանցե ցանկապատի ապամոնտաժում վերատեղադրմամբ	գծմ	88	11.839	1 041.832
				I, Ընդամենը	***10 800.246***
	II, Հողային աշխատանքներ				
1	Ա/բ ծածկի քանդում h=10սմ և բարձում էքս, 1,0մ3շ,տ, ա/ի տեղ, լցակույտ 3,0կմ	տ	1288	0.837	1 078.056
2	33r-III կարգի բնահողի մշակում և բարձում էքս,1,0մ3շ,տ, ա/ի վրա, տեղ, լցակույտ 3,0կմ	մ³	2423.8	1.537	3 725.381
3	33r-III կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ³	230	2.744	631.120
4	10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս, 1,0 մ3 շ, տ, ա/ի վրա, տեղափոխում լիցք 1,0կմ(հարթում,ջրում, խտացում)	մ³	68.4	1.356	92.750
5	10e-IV կարգի բնահողի մշակում և տեղափոխում 50մ լիցք բուլդոզերով (հարթում,ջրում, խտացում)	մ³	114	1.325	151.050
6	10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում պահուստում էքս, 1,25 մ3 շ, տ, ա/ի վրա, տեղափոխում լիցք 2,0կմ(հարթում,ջրում, խտացում)	մ³	21.5	8.103	174.215
				II, Ընդամենը	***5 852.572***
	III, Կողային առուներ				

1	10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս, 0,65մ3 շ,տ, ա/ի վրա տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ³	222.5	1.732	385.370
2	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ³	20	6.664	133.280
3	33r-III կարգի բնահողի մշակում և բարձում էքս, 0,65մ3 շ,տ, ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ³	106.6	1.537	163.844
4	33r-III կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ³	10	3.420	34.200
				III, Ընդամենը	*716.694*
	IV, Կողնակ				
1	Կողնակների իրականացում ավազակոպճային նյութով h=7սմ պլաստիկության ցուցանիշը 2-5% (նորոգվող հատվածներում)	մ²	4590	0.534	2 451.060
2	Կողնակների իրականացում ավազակոպճային նյութով h=5սմ պլաստիկության ցուցանիշը 2-5% (վերակառուցվող հատվածներում)	մ²	1572	0.454	713.688
3	Պահուստից 10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս, 1,25մ3 շ, տ, ա/ի վրա, տեղափոխում 2,0կմ հեռավորությամբ կողնակի լիցք h=20սմ (հարթում,ջրում, խտացում)	մ³	314.4	2.060	647.664
				IV, Ընդամենը	*3 812.412*
	V, Երթևեկելի մաս				
1	Խճավազային հիմք h=15սմ (C-5), 100մ2-ի համար՝ խիճ (40-70)-10% - 1,95մ3 խիճ (20-40)- 35% -6,825մ3 խիճ (10-20)-20% -3,9մ3 խիճ (5-10)-10% -1,95մ3 խիճ (0-5)-25% - 4,875մ3 (ավազ) ջուր-1,1մ3	մ²	8941	1.470	13 143.270
2	Խճավազային հիմքի (C 5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 1մ2 - 0,6 լ	տ	5.257	334.560	1 758.780
3	Ենթահիմք (ավազակոպիճ) h=10սմ	մ²	10543	0.531	5 598.333
4	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	8815	5.920	52 190.320
5	Մանրահատիկ ա/բ h=4սմ տիպ „բ"	մ²	17815	4.384	78 100.960
6	Փոսային նորոգում խճային հիմքով h=8-16սմ բիտումի տարածումով 4,12տ/1000մ2 խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	220	10.630	2 338.600
7	Փոսային նորոգում h=3-5սմ	մ²	220	5.297	1 165.340
8	Ա/բ ծածկի մակերեսի մշակում բիտումով	տ	1.764	334.563	590.169
9	Հարթեցնող շերտ h=3սմ	տ	*634.54*	45.370	28 789.080
				V, Ընդամենը	*183 674.852*

	VI, Իջատեղեր				
1	10e-IV կարգի բնահողի քանդում էքս, 0,65մ3 շ,տ, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	26	1.824	47.424
2	33r-III կարգի բնահողի քանդում էքս, 0,65մ3 շ,տ, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	78	1.602	124.956
3	10e-IV կարգի բնահողի քանդում ձեռքով, բարձում ա/ի վրա տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	3	5.906	17.718
4	33r-IIIկարգի բնահողի քանդում, բարձում ձեռքով ա/ի վրա, տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	7	2.744	19.208
5	Մանրահատիկ Ա/Բ h=4սմ	մ²	1616.14	4.384	7 085.158
6	Խիճավազային հիմք h=12սմ (C-5),100մ2-ի համար՝ խիճ (40-70)-1,56մ3 խիճ (20-40)-5,46մ3 խիճ (10-20)-3,12մ3 խիճ (5-10)-1,56մ3 խիճ (0-5)-3,9մ3 (ավազ) ջուր-1,1մ3	մ²	1538.89	1.238	1 905.146
7	Խճավազային հիմքի (C 5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 1մ2 - 0,6 լ	տ	0.905	334.49	302.710
8	Ø0,426մ մետ. խողովակի տեղադրում (6մմ)	գծմ	210.02	68.519	14 390.360
9	Ավազակոպճային շերտ h=10սմ (խող, տակ)	մ³	10.766	5.917	63.702
10	Ø0,426մ մետ. խողովակի ջրամեկուսացում	գծմ	202.22	2.357	476.633
11	Վաքի և խողովակի միացման միաձույլ բետոն B-20	մ³	2.34	110.107	257.650
12	Ø0,530մ խողովակի տեղադրում (6=7մմ)	գծմ	5.0	97.872	489.360
13	Ø0,530մ խողովակի ջրամեկուսացում	գծմ	4.4	2.933	12.905
14	Ø0,530մ խողովակի գլխամասերի կառուցում միաձույլ բետոնով B-20	մ³	0.8	119.232	95.386
15	Ø0,530մ խողովակի գլխամասերի ջրամեկուսացում	մ²	2.6	1.217	3.164
16	Հետիոտային անցումներում մետ. խողովակի Ø0,426մ տեղադրում (6մմ)	գծմ	30.0	68.519	2 055.570
17	Ավազակոպճային շերտ h=10սմ (խող. տակ)	մ³	0.85	5.918	5.030
18	Ø0,426մ մետ. խողովակի ջրամեկուսացում	գծմ	28.20	2.357	66.467
19	Միացման միաձույլ բետոն B-20	մ³	0.55	110.107	60.559
20	Կմ1+320-ում իջատեղի (ձախից) գոյություն ունեցող կամրջի, մուտքի ելքի և կամրջատակի մաքրում ձեռքով բարձում ա/ի -ի վրա տեղ, լցակույտ 3,0կմ հեռ, վրա	մ³	3	3.564	10.692
21	Կամրջի հիմքի և պատերի ամրացումը միաձույլ բետոնով B - 20	մ³	2.4	67.958	163.099

22	Կամրջի եզրապատերի կառուցում միաձույլ բետոնով B-20 (2,6x0,4x0,3)x2	գծմ	5.2	19.804	102.981
23	Կմ2+257 իջատեղ (ձախից)Ø0,426մ մետ. խողովակի ելքում միաձույլ բետոնե ջրհորի կառուցում B-20	հատ	1	165.725	165.725
24	Կմ2+678, կմ2+679 իջատեղ (ձախից և աջից) Ø 0,426մ մետ. խողովակների ելքերում միաձույլ բետոնե ջրհորների կառուցում B-20	հատ	2	165.718	331.436
25	Ջրհորների պատերի ջրամեկուսացում	մ²	23.1	1.205	27.836
26	Մետաղական ցանցի պատրաստում և տեղադրում > L 63x5մմ տեղադրում > L 50x5մմ տեղադրում > A500 C Ø 14մմ տեղադրում l=0,86մ (96հատ)	տ	0.194	765.226	148.454
27	Գոյություն ունեցող կերամ, խող,ապամոնտաժում Ø0,45մ և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	9	3.251	29.259
28	Գոյություն ունեցող կերամ, խող,ապամոնտաժում Ø0,4մ և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	19	2.872	54.568
29	Գոյություն ունեցող մետ, խող,ապամոնտաժում Ø0,325մ և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	11.5	1.318	15.157
30	Գոյություն ունեցող մետ, խող,ապամոնտաժում Ø0,426մ և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	32	1.722	55.104
31	Գոյություն ունեցող մետ, խող,ապամոնտաժում Ø0,53մ և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	11	2.204	24.244
32	Ե/բ սալ ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	մ³	1.68	18.387	30.890
				VI, Ընդամենը	*28 638.551*
	VII, Մայթեր				
1	Մանրահատիկ ա/բ h=3սմ	մ²	1462.88	3.438	5 029.381
2	Ավազակոպճային շերտ h=12սմ	մ²	1462.88	0.637	931.855
3	Բազալտե15x30սմ եզրաքարի տեղադրում միաձույլ բետոնե հիմք B-15, 1գծմ-0,035մ3,ավազկոպճային շերտ h=5սմ ,1գծմ-0,0125մ3	գծմ	103	11.524	1 186.972
4	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20սմ B-15,ավազակոպճային շերտ h=5սմ,1գծմ-0,01մ3	գծմ	786	1.410	1 108.260
				VII, Ընդամենը	*8 256.468*
	VIII, Ե/բ ԼՊվաքեր				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	24.12	5.915	142.670
2	ԼՊ-4 -ի տեղադրում B-25	գծմ	804	15.749	12 662.196
3	Ջրամեկուսացում	մ²	908.52	1.206	1 095.675

4	Անվտանգության բետոնե 15x30սմ եզրաքարի տեղադրում 1:1, միաձույլ բետոնե հիմք B-15, 1գծմ-15մ3, ավազկոպճային շերտ h=5սմ ,1գծմ-0,0125մ3	գծմ	402	6.431	2 585.262
5	Գոյություն ունեցող ЛР-ի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջ	գծմ	846	1.117	944.982
6	Գոյություն ունեցող մետ, կիսախողովակի 426մմ /2 ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջ	գծմ	12	3.673	44.076
				VIII, Ընդամենը	***17 474.861***
	X, Գծանշում				
	հոծ գիծ 1,1 (0,1)	գծմ	515	0.116	59.740
	ընդհատվող գիծ 1,5 1:3 (0,1)	գծմ	1485	0.056	83.160
	ընդհատվող գիծ 1,6 3:1 (0,1)	գծմ	730	0.096	70.080
	գծանշում 1,14,1	մ²	92.8	1.930	179.104
	գծանշում 1,13	մ²	3.9	1.930	7.527
	գծանշում 1,20	մ²	1.2	1.938	2.326
				X, Ընդամենը	***401.937***
	XI, Ճանապարհային նշաններ				
	- նախազգուշացնող	հատ	7	23.043	161.301
	- առավելության	հատ	25	25.796	644.900
	- արգելող	հատ	13	25.796	335.348
	- հատուկ թելադրանքի	հատ	32	25.796	825.472
	- հատուկ թելադրանքի (անհատական նախագծման)	մ²	2.46	53.825	132.410
	- տեղեկատվության	հատ	2	8.510	17.020
	տեղեկատվության (անհատական նախագծման)	մ²	23.19	53.825	1 248.202
	- լրացուցիչ տեղեկատվության	հատ	6	10.972	65.832
	միաձույլ բետոն B-15	մ³	8.1	49.001	396.908
	մետ. կանգնակØ 57մմ	գծմ	173	5.909	1 022.257
	մետ. կանգնակØ 76մմ	գծմ	69	6.822	470.718
2	Ճան. նշանների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	հատ	4	4.633	18.532
				XI, Ընդամենը	***5 338.899***
	XII, Արգելափակոցներ				
1	Պոլիմերային ազդանշանային սյունների տեղադրում(C1)	հատ	137	5.685	778.845
				XII, Ընդամենը	***778.845***
	XIII, Արհեստական կառուցվածքներ				
1	Մետաղական ժարտ= 325 մմ խողովակի տեղադրում 1գծմ=39,46 կգ, պատի հաստ, 5մմ	գծմ	18.4	46.951	863.898
2	Մետաղական ժարտ= 530 մմ խողովակների տեղադրում, 1գծմ=90,29կգ, պատի հաստ, 7մմ	գծմ	34.8	147.298	5 125.970
3	Հավաքովի ե/բ խողովակի d=1,5մ նորոգում	հատ	1	83.511	83.511

4	Հավաքովի ե/բ ուղղ, խողովակի բացվ,2x2մ նորոգում	հատ	1	164.967	164.967
5	Կմ 1+824,54 նոր կամրջի կառուցում	հատ	1	8850.607	8 850.607
6	Կմ 2+100,61-ում կամրջային անցման վերանորոգում	հատ	1	9114.427	9 114.427
				XIII, Ընդամենը	*24 203.381*
				Հատված Կմ 0+000 - Կմ2+702 ընդհանուրը	*289 949.717*
	Ա/Ճ Մոտեցում Մեծամորի Թանգարան *Հատված Կմ 0+000 - Կմ1+410*				
	I, Նախապատրաստական աշխատանքներ				
3	10կվ էլեկտրահաղորդման գծի տեղափոխում նոր հաղորդալարի մոնտաժում (3 x 450 մ)	գծմ	450	4.595	2 067.750
				I, Ընդամենը	*2 067.750*
	II, Հողային աշխատանքներ				
1	10e-IV կարգի բնահողի մշակում էքսկ, 1,0մ3 շ,տ, կողքի կուտակումով (կողնակների լիցքի համար)	մ³	28.4	0.705	20.022
2	Ա/բ ծածկի քանդում h=10սմ և բարձում էքս, 1,0մ3շ,տ, ա/ի տեղ, լցակույտ 3,0կմ	տ	1586	0.836	1 325.896
3	33r-III կարգի բնահողի մշակում և բարձում էքս,1,0մ3շ,տ, ա/ի վրա, տեղ, լցակույտ 3,0կմ	մ³	2171.3	1.537	3 337.288
4	33r-III կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ³	210	2.744	576.240
5	10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս, 1,0 մ3 շ, տ, ա/ի վրա, տեղափոխում լիցք 1,0կմ(հարթում,ջրում, խտացում)	մ³	239	1.356	324.084
6	10e-IV կարգի բնահողի մշակում և տեղափոխում 50մ լիցք բուլդոզերով (հարթում,ջրում, խտացում)	մ³	40	1.325	53.000
				II, Ընդամենը	*5 636.530*
	IV, Կողնակ				
1	Կողնակների իրականացում ավազակոպճային նյութով h=5սմ պլաստիկության ցուցանիշը 2-5% (վերակառուցվող հատվածներում)	մ²	1719.6	0.454	780.698
2	Կողնակների իրականացում 10e-IV կարգի բնահողից h=20սմ(10e-IV կարգի հանույթի մշակված բնահողից բարձում էքս, 1,0 մ3 շ, տ, ա/ի վրա, տեղափոխում կողնակների լիցք 1,0կմ)(հարթում,ջրում, խտացում)	մ³	28.4	1.167	33.143
3	Պահուստից 10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս, 1,25մ3 շ, տ, ա/ի վրա, տեղափոխում 2,0կմ հեռավորությամբ կողնակի լիցք h=20սմ (հարթում,ջրում, խտացում)	մ³	315.5	2.060	649.930
				IV, Ընդամենը	*1 463.771*
	V, Երթևեկելի մաս				

1	Խճավազային հիմք h=15սմ (C-5), 100մ2-ի համար՝ խիճ (40-70)-10% - 1,95մ3 խիճ (20-40)- 35% -6,825մ3 խիճ (10-20)-20% -3,9մ3 խիճ (5-10)-10% -1,95մ3 խիճ (0-5)-25% - 4,875մ3 (ավազ) ջուր-1,1մ3	մ²	8065	1.470	11 855.550
2	Խճավազային հիմքի (C 5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 1մ2 - 0,6 լ	տ	4.742	334.56	1 586.460
2	Ենթահիմք (ավազակոպիճ) h=10սմ	մ²	10201	0.531	5 416.731
3	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	7934	5.920	46 969.280
4	Մանրահատիկ ա/բ h=4սմ տիպ „բ"	մ²	7934	4.384	34 782.656
				V, Ընդամենը	*100 610.677*
	VI, Իջատեղեր				
1	10e-IV կարգի բնահողի քանդում էքս, 0,65մ3 շ,տ, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	55	1.824	100.320
2	33r-III կարգի բնահողի քանդում էքս, 0,65մ3 շ,տ, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	481	1.602	770.562
3	10e-IV կարգի բնահողի քանդում ձեռքով, բարձում ա/ի վրա տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	5	5.906	29.530
4	33r-IIIկարգի բնահողի քանդում, բարձում ձեռքով ա/ի վրա, տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	45.0	2.744	123.480
5	10e-IV կարգի բնահողի քանդում էքս, 0,65մ3 շ,տ, բարձում ա/ի և տեղափոխում հանգստի հարթակի լիցք 1,0կմ	մ³	10.00	1.423	14.230
6	Մանրահատիկ Ա/Բ h=4սմ	մ²	2232.86	4.384	9 788.858
7	խոշորահատիկ ա/բ h=6սմ (ավտոկայանատեղերում)	մ²	1534.40	5.920	9 083.648
8	Խիճավազային հիմք h=12սմ (C-5),100մ2-ի համար՝ խիճ (40-70)-1,56մ3 խիճ (20-40)-5,46մ3 խիճ (10-20)-3,12մ3 խիճ (5-10)-1,56մ3 խիճ (0-5)-3,9մ3 (ավազ) ջուր-1,1մ3	մ²	652.28	1.238	807.523
9	Խճավազային հիմքի (C 5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 1մ2 - 0,6 լ	տ	0.384	334.14	128.31
10	Խիճավազային հիմք h=15սմ (C-5),100մ2-ի համար՝ խիճ (40-70)-1,95մ3 խիճ (20-40)-6,825մ3 խիճ (10-20)-3,9մ3 խիճ (5-10)-1,95մ3 խիճ (0-5)-4,875մ3 (ավազ) ջուր-1,1մ3 (ավտոկայանատեղում)	մ²	1534.40	1.470	2 255.568

11	Խճավազային հիմքի (C 5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 1մ2 - 0,6 լ	տ	0.902	334.62	301.83
12	Ենթահիմք (ավազակոպիճ) h=10սմ (ավտոկայանատեղում)	մ²	1534.40	0.531	814.766
13	Կմ 0+869-ում մուտք (աջից)գոյ, ունեցող խողովակի գլխամասերի կառուցում միաձույլ բետոնով B-20	մ³	2.6	119.232	310.003
14	Կմ0+869-ում գոյ, ունեցող խողովակի մաքրում մուտքում, ելքում և մեջը ձեռքով բարձում ա/ի -ի վրա տեղ, լցակույտ 3,0կմ	մ³	3	3.564	10.692
15	Կմ 1+103 -ում մուտք (աջից) գոյ, ունեցող խողովակի գլխամասերի կառուցում միաձույլ բետոնով B-20	մ³	2.6	119.232	310.003
16	Կմ1+103-ում գոյ, ունեցող խողովակի մաքրում մուտքում, ելքում և մեջը ձեռքով բարձում ա/ի -ի վրա տեղ, լցակույտ 3,0կմ	մ³	3	3.564	10.692
				VI, Ընդամենը	*24 860.016*
	VII, Մայթեր				
1	Մանրահատիկ ա/բ h=3սմ	մ²	905.81	3.438	3 114.175
2	Ավազակոպճային շերտ h=12սմ	մ²	905.81	0.637	577.001
3	Բազալտե15x30սմ եզրաքարի տեղադրում միաձույլ բետոնե հիմք B-15, 1գծմ-0,035մ3,ավազկոպճային շերտ h=5սմ ,1գծմ-0,0125մ3	գծմ	1438	11.524	16 571.512
4	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20սմ B-15,ավազակոպճային շերտ h=5սմ,1գծմ-0,01մ3	գծմ	1111	1.410	1 566.510
5	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20սմ B-15 ավտոկայանատեղի շուրջը,ավազակոպճային շերտ h=5սմ,1գծմ-0,01մ3	գծմ	145.4	1.410	205.014
6	Ավտոկայանատեղի եզրամասում սնահողի լիցք h=10սմ (սնահողի մշակում և բարձում էքս, 1,0մ3շ,տ, ա/ի վրա տեղ, 2,0կմ) (խոտի ցանում)	մ²	232.5	1.513	351.773
7	Հանգստի հարթակում լիցքի իրականացում h=5սմ 10eIV (իջատեղի բնահողից), (ջրի ցանումով և խտացմամբ պնեմոտոտփանով)	մ³	10	0.791	7.910
8	Ծառաբների շուրջը բազալտե եզրաքարերի 10x20սմ տեղադրում միաձույլ բետոնե հիմքի վրա B-15 ,1գծմ - 0,025մ3,ավազակոպճային շերտ h=5սմ ,1գծմ-0,01մ3	գծմ	30	7.362	220.860
9	Հանգստի հարթակում բազալտե եզրաքարերի 10x20սմ տեղադրում միաձույլ բետոնե հիմքի վրա B-15 ,1գծմ - 0,025մ3,ավազակոպճային շերտ h=5սմ ,1գծմ-0,01մ3	գծմ	68	7.362	500.616
10	Ավտոկայանատեղի շուրջը բազալտե եզրաքարերի 15x30սմ տեղադրում միաձույլ բետոնե հիմքի վրա B-15 ,1գծմ - 0,035մ3,ավազակոպճային շերտ h=5սմ , 1գծմ-0,0125մ3	գծմ	116	11.524	1 336.784
11	Գոյ, ունեցող մայթի բազալտե եզրաքարերի քանդում և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	170	1.164	197.880

12	Ծառաբներում սնահողի լիցք h=10սմ (սնահողի մշակում և բարձում էքս,1մ3շ,տ, ա/ի տեղափոխում 2,0կմ,)	մ²	12	1.323	15.876
13	Ավազացեմենտային խարնուրդ h=7սմ (հանգստի հարթակում 30% ցեմենտ 70% ավազ)	մ²	196	2.485	487.060
14	Բազալտե սալերի տեղադրում h=3սմ (հանգսի հարթակում)	մ²	196	11.075	2 170.700
				VII, Ընդամենը	*27 323.670*
	IX,Բազալտե քարերով վերին հենապատի նորոգում				
1	Գոյություն ունեցող բազալտե քարերով վերին հենապատի թափված քարերի վերականգնումը նույնատիպ բազալտե քարերով	մ²	3	30.948	92.844
2	Միաձույլ բետոնե թասակի կառուցում h=5սմ B-20	գծմ	95	2.258	214.510
3	Գոյություն ունեցող ցանցե ցանկապատի ներկում (յուղաներկ)	մ²	162	1.371	222.102
				IX, Ընդամենը	*529.456*
	X,Գծանշում				
	հոծ գիծ 1,1 (0,1)	գծմ	653	0.116	75.748
	ընդհատվող գիծ 1,5 1:3 (0,1)	գծմ	580	0.056	32.480
	ընդհատվող գիծ 1,6 3:1 (0,1)	գծմ	400	0.096	38.400
	գծանշում 1,13	մ²	1.5	1.930	2.895
	գծանշում 1,20	մ²	1.2	1.938	2.326
				X, Ընդամենը	*151.849*
	XI, Ճանապարհային նշաններ				
	- նախազգուշացնող	հատ	8	23.043	184.344
	- առավելության	հատ	12	25.796	309.552
	- արգելող	հատ	14	25.796	361.144
	- տեղեկատվության	հատ	4	8.510	34.040
	տեղեկատվության (անհատական նախագծման)	մ²	7.71	53.825	414.991
	- լրացուցիչ տեղեկատվության	հատ	11	10.972	120.692
	միաձույլ բետոն B-15	մ³	4.73	49.001	231.775
	մետ. կանգնակØ 57մմ	գծմ	115	5.909	679.535
	մետ. կանգնակØ 76մմ	գծմ	34	6.822	231.948
				XI, Ընդամենը	*2 568.020*
	XII, Արգելափակոցներ				
1	Պոլիմերային ազդանշանային սյունների տեղադրում(C1)	հատ	106	5.685	602.610
				XII, Ընդամենը	*602.610*
	XIII, Արհեստական կառուցվածքներ				
1	Մետաղական ժարտ=1520մմ խողովակի տեղադրում, 1գծմ= 537 կգ, պատի հաստ,15մմ	գծմ	14	958.187	13 414.618
2	Մետաղական ժարտ=820մմ խողովակի տեղադրում 1գծմ=140,35կգ, պատի հաստ, 7մմ	գծմ	10.9	288.296	3 142.426
3	Մետաղական ժարտ= 530 մմ խողովակի տեղադրում1գծմ=90,29կգ, պատի հաստ, 7մմ	գծմ	11.8	186.219	2 197.384

4	Մետաղական խողովակի d=1020մմ նորոգում	հատ	1	63.582	63.582
5	Կմ 0+830,87-ում կամրջային անցման վերանորոգում	հատ	1	14819.603	14 819.603
				XIII, Ընդամենը	*33 637.614*
				Հատված Կմ 0+000 - Կմ1+410 ընդհանուրը	*199 451.963*
				Ամբողջը	*489 401.680*

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Բերմա» ՓԲԸ
ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս,
Արդյունաբերական հանգույց,
Արտադրական թիվ 9
«Ամերիաբանկ» ՓԲԸ , Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 1570015674010100
ՀՎՀՀ 03800108

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«03» սեպտեմբերի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/4Շ ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
Մոտեցում Մեծամորի թանգարան 4.1կմ (3.6+0.5) ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների կատարման

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 70 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
1	Նախապատրաստական աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
2	Հողային աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 40 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
3	Արհեստական կառուցվածքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 50 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
4	Ճանապարհային պատվածք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 65 օր հետո
5	Ճանապարհի կահավորում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 70 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 70 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
ՀՀ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Բերմա» ՓԲԸ
ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս,
Արդյունաբերական հանգույց,
Արտադրական թիվ 9
«Ամերիաբանկ» ՓԲԸ , Շենգավիթ մ/ճ
ՀՀ 1570015674010100
ՀՎՀՀ 03800108

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 03 » հոկտեմբեր 2013թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 03 » հոկտեմբեր 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
03.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/4Շ պետական գնման պայմանագրի

ք. Երևան <<16>> **հոկտեմբերի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի փոխարինող Հ. Բատիկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բերմա>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Մանուկյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.09.2019թ. թիվ 1184-Ն և թիվ 1209-Ն որոշումները և Կողմերի միջև 03.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/4Շ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի 2019թ. Վճարման ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Բերմա» ՓԲԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս,
ՀՀ կենտրոնական գանձապետարան	Արդյունաբերական հանգույց,
ՀԿՀՀ 02578338	Արտադրական թիվ 9
ՀՀ 900011025823	«Ամերիաբանկ» ՓԲԸ , Շենգավիթ մ/ճ
	Հ/Հ 15700015674010100
	ՀԿՀՀ 03800108
/ստորագրություն/	/ստորագրություն/
	Կ.Տ.

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՀՄԱ ԱՇՁՐ-2019/4Շ գնման պայմանագրի
«16» հոկտեմբերի 2019թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով
ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/68	**Մոտեցում Մեծամորի թանգարան 4.1կմ (3.6+0.5) ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ**	-	-	-	-	-	-	-	-	-	440,461,512	440,461,512	440,461,512	440,461,512

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀԿՀՀ 02578338
ՀՀ 900011025823

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«Ռերմա» ՓԲԸ
ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս,
Արդյունաբերական հանգույց,
Արտադրական թիվ 9
«Ամերիաբանկ» ՓԲԸ Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 1570015674010100
ՀԿՀՀ 03800108

/ստորագրություն/
Կ.Տ.